

**ԿԵՆՏՐԱՆԱԿԵՐՊԻ ՀԱՄԱՍՏԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅՑԵՐԵՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ**

Գ. Բ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

Գիտության պատմության մեջ կենդանակերպի համաստեղությունների նշանադրերը ներկայացվում են 1-ին աղյուսակում:

Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված ժայռապատկերները հարուստ նյութ են պարունակում համաստեղությունների գաղափարագրերի մասին. ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ստեղծվել են մեր թվականությունից առաջ III հազարամյակի սկզբներին:

Ստորև գետեղում ենք երկու համաստեղությունների՝ Նոյի և Աղեղնավորի գաղափարագրերի ամբողջական աղյուսակները²:

Համար 2 և 3 աղյուսակներից երևում է, որ նշված համաստեղությունների գաղափարագրերը հազարամյակների ընթացքում ենթարկվելով փոփոխության, ստացել են այն տեսքը, որն ընդունված է գիտության պատմության մեջ:

Կենդանակերպի համաստեղություններին տրված անվանումները ավելի հին են, քան դրանց գաղափարագրերը, որովհետև նախ անուններ են տրվել հայտնաբերված համաստեղություններին, հետո միայն՝ ստեղծվել գաղափարագրեր:

Սա նշանակում է, որ հայկական լեռնաշխարհի բնակիչները համաստեղություններին անուններ են տվել առնվազն մեր թվականությունից երեք հազար տարի առաջ:

Հայերեն անվանումների ժամանակի մասին է. Աղայանը գրում է. «Ջննության առնելով կենդանաշրջանի համաստեղությունների (կենդանակերպների) անվանումները՝ համազում ենք հետևյալ ընդհանուր եզրակացություններին:

1. Տասներկու անվանումներից 8-ը քնիկ հայերեն բառեր են կամ դրանցից կազմված բաղադրություններ (ցուլ, երկ-ա-տոր, խեց-գետին, առիծ, կարիճ, այծ-եղջիր, ջր-հոս, ձուկ), կշիռ ասորական (ասորեստանյան) փոխառություն է, խոյ, կոյս, աղեղն ստուգաբանված չեն (ծագումը հայտնի չէ), չկա ոչ մի իրանական, ասորական կամ հունական փոխառություն: Սրանից ինքնին բխում է այն, որ կենդանակերպների անվանակոչությունը տեղի է ունեցել իրանական ազդեցությունների սկզբնավորումից առաջ, այսինքն՝ նախքան մ. թ. 7-րդ դարը»³:

Այնուհետև նա գրում է. «Երբ տարբեր ժողովուրդների լեզուներով կենդանակերպներին տրված անունները համեմատում ենք միմյանց հետ, ապա տեսնում ենք, որ դրանք ճշտորեն համապատասխանում են միմյանց՝ իրենց բառային իմաստներով, օրինակ հայերեն խոյ, հունարեն χσιος, լատիներեն aues, ռուսերեն овен, հայ. ցուլ, հուն. τавρος, լատիներեն tauras, ռուս. телу, հայ. երկատր, հուն. διδυμος, լատ. gemini, ռուս. близнецы, պոլսերեն և՛ մյուսները: Կարելի է կարծել, թե բոլորի աղբյուրը հունարենն է, սակայն դա ճիշտ կլինի լատիներենի և նոր եվրոպական լեզուների նկատմամբ: Ինչ վերաբերում է հայերենին, հին (նաև միջին և նոր) պարսկերենին, ապա հունարեն անվանումների թարգմանությունը համարել չի կարելի, ուստի և ճիշտ է հունարենի, հայերենի, պարսկերենի և ուրիշ լեզուների համար ենթադրել մի ավելի հին աղբյուր, այսինքն՝ ընդունել, որ մի ավելի հին ժողովրդի անվանումների թարգմանությունն են միմյանցից անկախ»⁴:

Է. Աղայանը հաշվի առնելով նաև Անանիա Ծիրակացու, Ալիշանի, տոմարագետ հայալանի կարծիքները, գտնում է, որ կենդանաշրջանի 12 համաստեղությունների անվանում-

¹ O. Heřredayev. Точные науки в древности, 1968, с. 216.

² Հ. Մաթթիարյան, Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, 1978, էջ 149, 168:

³ Է. Աղայան, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Երևան, 1986, էջ 80:

⁴ Նույն տեղում, էջ 81:

ԿԵՆՏԱՆԱԿԵՐՊԻ ՆՃԱՆՆԵՐԸ

Պ	կոյ	Պ	կշեռ
Ս	կու	Պ	կարգե՛Ց
Ս	կրկնորդաներ	Պ	կրծողակոր
Ս	կնճղճոթ	Պ	կլծնղղյուր
Ս	կարուծ	Ս	զրիտս
Ս	կոպս	Ս	զկնճր

Աղ. 1

Անոթ գալիս են քաղղեացիներից (աքքաղեն-րից) և այդ անվանումներն են, որ թարգման-վել են հայերեն, հունարեն, հին պարսկերեն և այլ լեզուներով⁵:

Ամփոփելով իր ուսումնասիրության ար-դյունքները Աղայանը գրում է. «Այս քոլորը մեզ հիմք է տալիս ընդունելու, որ կենդա-նաշրջանի (Ջողիակոսի) 12 համաստեղու-թյունների անվանակոչությունը տեղի է ունե-ցել մախբան մ. թ. ա. 7-րդ դարը, հավանա-բար առաջին հազարամյակի սկզբներում, եթե ոչ ավելի վաղ»⁶:

Համաստեղություններին հայերեն անուններ տալու համար պետք է, որ գոյություն ունե-նաք մի ցեղախումբ, կամ ժողովուրդ, որը խոսում էր հայերեն լեզվով:

Մեզ հետաքրքրող հարցի առնչությամբ Գ. Բ. Ջահուկյանը գրում է. «Այս դեպքում հա-լոց լեզվի ինքնուրույն գոյության մախբարա-լին շրջանի համար կարելի է տարբերել եր-կու հիմնական շրջան՝ համապատասխան են-թաշրջանների առանձնացմամբ:

1. Վաղնջական շրջան (վաղնջահայերեն)⁷ մ. թ. ա. 3-րդ հազարամյակի սկզբներից մին-չև մ. թ. ա. 13-րդ դարը. այս շրջանի մեջ պայմանականորեն, առանց հետագա հանգա-մանակից բնութագրման, կարելի է առանձ-նացնել երկու ենթաշրջան՝

ա) սկզբնաչին վաղնջական՝ մ. թ. ա. 3-րդ հազարամյակ.

բ) ուշ վաղնջական՝ մ. թ. ա. 2-րդ հազա-րամյակի սկզբներից մինչև մ. թ. ա. 13-րդ դարը:

2. Հնագույն շրջան (հնագույն հայերեն)⁸ մ. թ. ա. 12-րդ դարից մինչև մ. թ. ա. 4-րդ դարը. այս շրջանում ավելի որոշակիորեն կա-րելի է տարբերել երկու ենթաշրջան՝

ա) վաղ հնագույն՝ մ. թ. ա. 12-րդ դարից մինչև մ. թ. ա. 4-րդ դարը.



ԿԵՆՏԱՆԱԿԵՐՊԻ
Ս Ս Ս Ս Ս



ԳԵՊԱԲԵԿ
Ս Ռ Ա Մ Դ



ԴՆԸ
Ս Ռ Ս Ա Ս




ՈՐՐԱՐՏԱՐԱՆ ԳԵՊԱԲԵԿ



ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՈՅԼ
ԳԵՊԱԲԵԿ

Աղ. 2

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 92:
⁶ Նույն տեղում:



Աղ. 8

բ) ուշ հնագույն՝ մ. թ. ա. 3-րդ դարից մինչև մ. թ. ա. 4-րդ դարը⁷: Այս քուրդից որոշակի երևում է, որ հայոց լեզուն (վաղնջական) ինքնուրույն գոյություն է ունեցել մեր թվականությունից երեք հազար տարի առաջ: Ինչպես տեսանք, ժայռապատկերների ուսումնասիրությունը Հայաստանում, այն էլ մի փոքրիկ մասում՝ Հայկական քարձրավանդակի տարածքում, որոշակիորեն ցույց է տալիս, որ մեր թվականությունից երեք հազար տարի առաջ գոյություն են ունեցել կենդանակերպի համաստեղությունների գաղափարագրեր, որոնք ապացույց են այն փաստի, որ համաստեղությունները ունեցել են անուններ:

Այժմ մնում է պատասխանել այն հարցին, թե հայերը քաղղեացիների համաստեղությունների անուններն են թարգմանել հայերեն, թե՞ հնարավոր է այդ հարցին տալ նաև

⁷ Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 25:

ալ մեկնարարություն: Որպեսզի կարողանանք պատասխանել առաջադրված հարցին, անհրաժեշտ է պատասխանել մի այլ հարցի: Երկրագնդի վրա որտե՞ղ են առաջին անգամ համաստեղություններն անվանել կենդանիների անուններով: Այս կապակցությամբ Ու. Օլկոտը գրում է. «Աստղաբաշխության տվյալները համապատասխանում են պատմական ու հնագիտական ուսումնասիրություններին այն բանում, որ համաստեղությունների հնագույն ձևերը հորինած մարդիկ, հավանաբար, ապրել են Եփրատի հովտում, ինչպես նաև Արարատ լեռան մոտակա շրջաններում»⁴:

Մի այլ տեղ գրում է. «Այսպիսով, դատելով զուտ տրամաբանորեն, մենք կարող ենք պնդել, որ աստղակերպերի հայտնեցը թերևս Փոքր Ասիան լինի և Հայաստանը, այսինքն մի մարզ, որը սահմանափակված է Սև, Միջերկրական, Կասպից և Էգեյան ծովերով»⁵:

Գիտության պատմության աշխատությունները սովորաբար սկսվում են Միջագետքից՝ շումերների և աքքադացիների գիտական նվաճումներից: Եթե հայկական աղբյուրներում նշվում են, որ հայերը կենդանակերպի համաստեղությունների անունները թարգմանաբար փոխ են անել քաղղեսացիներից (աքքադացիներից) մ. թ. ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կեսին, ապա բացառված չէ, որ այդ շրջանում հայերը իրենք նույնպես մասնակցելով համաստեղությունները կենդանիների անուններով կոչելուն, ոչ միայն թարգմանել են առանձին համաստեղությունների անուններ, որոնք հայտնաբերել են քաղղեսացիները, այլև իրենք իքնուրույն կերպով հայտնաբերել են համաստեղություններ և տվել հայկական անուններ: Այս ենթադրությունը ապացուցվում է նրանով, որ համաստեղությունները կենդանիների անուններով կոչելու վայրը ոչ միայն Միջագետքն է, այլև Հայաստանը: Այդ ենթադրությունը դառնում է ավելի հավաստի, որովհետև Հայաստանում հայտնաբերվել են ժայռապատկերներ, որտեղ անկա են համաստեղությունների գաղափարագրեր մեր թվականությունից առաջ 3-րդ հազարամյակում:

Եթե գաղափարագրերը անեղծվել են մեր թվականությունից առաջ 3-րդ հազարամյակում, ապա համաստեղությունների՞ անուններ պետք է տրված լինեն առնվազն մ. թ. ա. 4-րդ հազարամյակի վերջերին, կամ երրորդ հազարամյակի սկզբներին:

1. Б. ПЕТРОСЯН.— О времени присвоения армянских имен названиям зодиака.—Наскальные рисунки, обнаруженные на Армянском нагорье, содержат богатый материал об идеографических знаках зодиака, относящихся в 3000 г. до н. э. К этому времени относятся формирование армянского языка.

Делается обоснованное предположение, что древние армяне не только переводили отдельные названия созвездий, открытых в Месопотамии, но и самостоятельно открывали созвездия зодиака и присваивали им армянские названия.

⁴ У. Т. Олькотт, Легенды звездного мира, Пг., 1914, с. 8.

⁵ Նույն տեղում, էջ 9: